— Գնացի, աչխարհը պտտեցի, եկայ։ Բայց ո՞ւր են մեր բարեկամները։ Ո՞ւր են լեռներէն իջնող վիթխարի այն ոգիները, որոնց ոտնաձայնը դղրդում էր ձորերի մէջ, անտառների կատարին խարշափ յարուցանում եւ դաշտերի մէջ արծաթէ ձայներ հնչեցնում։ Ո՞ւր են նրանք, որոնք լուսաւոր մատներով քո վարսերդ էին հիւսում եւ արշալոյսների կարմիր ճառագայթները մանում։ Հրեշտակդ իր թեւը կոտրել է, եւ դու, ծերացե՛լ ես, մայր։

Գարունն էլ եկել իր խօսքն է ասում։

Ասում է. կա՛ն, դեռ կան, չուտով պիտի գան, պիտի ցանեն, պիտի հնձեն, պիտի ժողվեն, արծաթէ կաթսան լեցնեն ծաղիկներով, ծաղիկներով, որպէսզի եփի, եփի եւ եռայ, Սեւանայ կղզու ոգին վերանայ։ Կան, դեռ կա՛ն, պիտի գան, պիտի գան...

Լիճն էլ խաղաղ է եւ խոր։
Խաղաղ է եւ կապոյտ։
Սեւա՛ն, Սեւա՛ն։

(Շարունակելի)

ԹԻԹԵՌՆԻԿԻՆ ՄԱՀԸ

Թիթեռնիկը սէր երգելով,
Հոս հոն թռաւ յամառ կամքով.
Հազա՞ր սրտէ, հազա՞ր խոստում
Եղաւ իրեն մինչեւ գարուն։

Վարդը ըսաւ՝ կը սիրեմ քե՛զ.
Շուշանն ըսաւ՝ ա՞խ իմ սրտէս
Պիտ պաշտեմ քեզ։

Ա՛լ ծովերը, ա՛լ աստղերը,
Ա՛լ դաշտերու կակաչները՝,
Շփացուցին, զարդարեցին
Թիթեռնիկը հագուեցուցին։

Բայց վա՞խ, վա՞խ, վա՞խ... հազար ափսոս,
Ձիւնը իջաւ, ձմեռ եկաւ.
Մեռան վարդեր, մեռան աստղեր,

Ա՞խ ցուրտ քամին ուժով փչեր...
Խեղճ թիթեռը ալ յուսահատ,
Ինկաւ լոյսի բոցերուն տակ.
Թեւերն այրեց հոգին մարեց...

ՆՈՒԱՐԴ ՏԷՐ ՄԻՔԱՑԷԼԵԱՆ

ԼՈՒՍՆԿԱՆ

Լուսնկան լիճն է իջեր.—
Քրքում մ'անուշ գոյներուն մէջ ոսկեծոպ.
Կանանչներուն վրայ ծաղիկ ու ձայներ,
Նորէն մշուշ ու անուրջ։

Նունուփարներս ծաղկեր են,
Շրթներուդ պէս այնպէս քաղցր ու գինով.
Պարտէզիս մէջ լուսացնցուղ կ'անձրեւեն,
Ծառերն անուշ հեշտանքով։

Ու դուն նորէն կը ծագիս,
Լուսնակին հետ, դուն ալ արծաթ շող մ'ես
արդէն
Մութ աչքերով, ծով ու հզօր նայուածքով
Հիւանդ գինով հոգիիս։

Գինով հիւանդ հոգիիս
Կ'իջնէ սարսուռն անծանօթ, գիշերին հետ
շղարշէ,
Կարօտի համբոյր, լուսէ ծաղիկ ու նարգիզ
Լուսերուն մէջ երազէ։

Լուսնկան հոգիիս մէջ է ինկեր — քեզի պէս։

Պ. ՄԻՆԱՍԵԱՆ

ԿԵԱՆՔԻ ՀՆՈՑԷՆ

ԿՆՈՋ ՍԷՐԸ ...

Կնոջ սէրը՝ խե՞ւ թիթեռնիկ,
Թե՞ւ թռչունի...
Ոստէ ի ոստ, ծաղկէ-ծաղիկ,
Կայա՛ն չունի՞...

Կ Ի Ն ...

Սիրէ կինն՝
Իրրեւ ծաղիկ
Կամ թիթեռնիկ,
Ո՛չ աւելին...

Ց. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան